

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՕԲՅԵԿՏ
Աբրահամյան Վ. Մ., Մարտիրոսյան Լ. Մ., Մարգարյան Ռ. Մ.,
Մարգարյան Հ. Մ.**

Հետազոտության նպատակն է եղել բացահայտել Շիրակի մարզի տարածքում զբոսաշրջության համար առավել գրավիչ պատմամշակութային հուշարձանների առկայությունը, ինչպես նաև տալ դրանց զբոսաշրջային օգտագործման հնարավորությունները: Կարևոր խնդիր է հանդիսացել նաև Շիրակի մարզի տարբեր ենթաշրջանների պատմամշակութային հուշարձաններով հագեցվածության գնահատումը, ինչը թույլ կտա ցույց տալ մարզի առավել մեծ զբոսաշրջային հնարավորություններ ունեցող ուղղությունները:

Բանալի բառեր. հուշարձան, եկեղեցի, զբոսաշրջություն, Շիրակի մարզ, քարտեզագրում, գնահատում, սանդղակ, ենթաշրջան:

Մեր կողմից իրականացվել է գրականության վերլուծություն: Պատմամշակութային հուշարձանների գնահատմանը նվիրված գիտական աշխատանքներ են կատարել բազմաթիվ գիտնականներ, այդ թվում՝ Ն. Ս. Միրոնենկոն, Օ. Վ. Սերովան, Յու. Ա. Վեդենինը, Լ. Մ. Մարտիրոսյանը և ուրիշներ: Մեր կողմից առավել ընդունելի է եղել հուշարձանների բալային գնահատումը, որի վերաբերյալ աշխատություններ են հրապարակել Ս. Վ. Սոտնիկովան, Ն. Ա. Կուսովան, Ն. Պ. Ռոդնիկովան, Լ. Մ. Մարտիրոսյանը և ուրիշներ:

Շիրակի մարզի պատմամշակութային հուշարձանների քարտեզի կազմման համար տեղեկատվության աղբյուր են հանդիսացել տարատեսակ գրական աղբյուրներ:

Ելակետային տվյալների տարածական կոորդինատների դուրս բերման նպատակով օգտվել ենք Google Earth ծրագրից, որտեղ տեղայնացվել են ուսումնասիրվող տարածքի համար առանձնացված


պատմամշակութային բոլոր հուշարձանները: Ստացված ցանկը, որը կազմված թվով 141 պատմամշակութային հուշարձաններից, պահպանվել է համապատասխան ելքային ֆայլի տեսքով .kml ֆորմատով:

Քարտեզագրական աշխատանքների հիմնական մասը կատարվել է ArcMAP 10.5 ծրագրային միջավայրում: Առաջին քայլով կազմվել է ուսումնասիրվող տարածքի քարտեզագրական հենքը, որը ներառում է Շիրակի մարզի տարածական սահմանները, ճանապարհատրանսպորտային և բնակավայրերի ցանկը: Պատմամշակութային հուշարձանների քարտեզի կազմման նպատակով վերոնշյալ .kml ֆորմատով ֆայլը ենթարկվել է կոնվերտացիայի և վերափոխվել շերտային ֆայլի, ինչից հետո ավտոմատ ձևով, ելնելով դրանց տարածական կոորդինատներից, պատմամշակութային հուշարձանները տեղայնացվել են հենքային քարտեզի վրա: Արդյունքում կազմվել է Շիրակի մարզի պատմամշակութային հուշարձանների քարտեզը, որտեղ հանդես են գալիս 7 հիմնական տիպի հուշարձաններ՝ վանքեր և եկեղեցիներ (թվով 46), դամբարանադաշտեր և քարակույտեր (թվով 11), ամրոցներ (թվով 26), բնակատեղիներ (թվով 42), սրբավայրեր (թվով 5), քարայրկացարաններ (թվով 10) և մեկ կամուրջ՝ Խարկովի կամուրջը Ախուրյան գետի վրայով: Ելնելով տիպաբանությունից՝ դրանք ենթարկվել են նաև դասակարգման և ներկայացվել համապատասխան պայմանական նշանների ձևով: Հավելված 1-ում բերվում է նաև առանձնացված պատմամշակութային հուշարձանների անվանումները և հերթական համարները ըստ կազմված քարտեզի:

Շիրակի մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ՝ ամրոցներ, դամբարանադաշտեր, բնակատեղիներ, գերեզմանոցներ, եկեղեցիներ, բնակելի տներ, տնտեսական կառույցներ և այլն, որոնց ուսումնասիրումը, դասակարգումն ու պահպանությունը հնարավորություն է տալիս դրանց նպատակային օգտագործման ինչպես գիտական ու կրթական, այնպես էլ զբոսաշրջային ոլորտում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հուշարձանները տարածքի պատմության լուռ վկաներն են և արտացոլում են տարածքի ու այնտեղ ապրող բնակչության անցած պատմական ուղին, մեր նպատակն է անդրադառնալ մարզի պատմամշակութային հուշարձանների դասակարգմանը, ինչը կհեշտացնի դրանց գնահատումը որպես զբոսաշրջության օբյեկտ:

Շիրակի մարզի տարածքը կազմում է «Աշխարհացոյց»-յան Այրարատ աշխարհի Շիրակ գավառի արևելյան հատվածը: Մարզի տարածքը հյուսիսից եզերում են Չլդրրի, հյուսիս-արևմուտքից՝ Եղնախաղի լեռները, արևմուտքից՝ Ախուրյան գետը, արևելքից՝ Ջավախքի լեռնավահանը, իսկ հարավից՝ Արագածի հյուսիսային լեռնալանջերը:

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԶԱՐԿԵԾ**



Նկար 1

Մարզի տարածքը հարուստ է մարդկության գրեթե բոլոր ժամանակաշրջաններին վերաբերող պատմական հուշարձաններով, ինչը լավ նախադրյալ է զբոսաշրջության այս տեսակի զարգացման համար: Հողվածում զետեղված նյութը նաև օգտակար կլինի

էքսկուրսավարների համար՝ Շիրակի մարզում զբոսաշրջային պատմամշակութային տուրերի կազմակերպման գործում:

Ք.ա. III հազարամյակի կեսերից (2400-1500) սկսվում է միջին բրոնզի դարը, երբ Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային շրջաններում հաստատվում են վաղ դամբարանաբլուրների և գունագարդ խեցեղենի մշակույթը կրող հնդեվրոպական ցեղախմբեր: Նրանց ստեղծած մշակույթն ընդգրկում է ողջ Հայկական լեռնաշխարհը: Այս դարաշրջանի հուշարձանների 70 տոկոսը կազմում են դամբարանադաշտերը [1, էջ 32]: Շիրակի մարզի տարածքի 61 բնակավայրերին հարակից տարածքներում պեղվել են դամբարանադաշտեր, որոնք թվագրվում են Ք. ա. III-I (Արթիկ, Աղին, Խարկով, Գուսանագյուղ, Լանջիկ, Լեռնակերտ, Կամո, Կարմրաքար, Հայկավան, Հառիճ, Հոռոմ, Հովիտ, Մարմաշեն, Մուսայելյան (Ախուրյան), Մարատակ, Սպանդարյան, Քեթի և այլն) կամ Ք.ա. II-I հազարամյակներով (Մարալիկ, Ագատան, Անիպեմզա, Բանդիվան և այլն) [2]: Դամբարանադաշտերը հիմնականում տարածված էին ամրոցների կամ բնակատեղիների շրջակայքում:

Հայաստանը հին աշխարհի այն տարածաշրջաններից է, որտեղ ծագել ու ձևավորվել են ամրաշինության (բերդշեներ) սկզբունքները: Շիրակի մարզի ողջ տարածքը ծածկված է բերդշեների ցանցով, որոնց շրջակայքում մեծ մասամբ տարածվում են բնակատեղիներ ու դամբարանադաշտեր: Դրանք տարածվում են քարքարոտ, բարձրաբերձ, ամրություններ ու բնակարաններ կառուցելու համար հարմարավետ բլուրների և նրանց միջև ընկած հարթավայրերի վրա [3, էջ 28]:

Ք.ա. IX դարում Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքն ընդգրկող միասնական հայկական պետություն է ձևավորվում՝ Վանի կամ Արարատյան թագավորությունը՝ դառնալով Առաջավոր Ասիայի հզորագույն պետություններից մեկը: Այս շրջանից մեզ են հասել արձանագրություններ, ամրոցներ, ապարանքներ, տաճարներ, բերդաքաղաքներ և այլն: Վանի թագավորները իրենց կատարած արշավանքների և շինարարական աշխատանքների վերաբերյալ թողել են գրավոր հիշատակություններ՝ սեպագիր արձանագրություններ, որոնցից երկուսը գտնվել են Շիրակի մարզի տարածքում: Արձանագրություններից մեկը գտնվել է Սպանդարյան (Ղուլիջան) գյուղում՝ Կարկաչուն գետի ափին՝ ժայռի վրա: Այն թողել է Արգիշտի I-ը: Մյուս արձանագրությունը Մարմաշենի ժայռափոր արձանագրությունն

է: Անհրաժեշտ միջավայրի ստեղծումից հետո երկու արձանագրություններն էլ կարող են դառնալ մատչելի զբոսաշրջիկների համար:

IV-VII դարերից մեզ են հասել հիմնականում կոթողային ու պաշտամունքային կառույցներ: Շիրակի մարզի Անիպեմզա գյուղի արևելյան եզրին է գտնվում V-VI դդ-ի Երերույքի տաճարը (Մբ. Կարապետ), որը վաղմիջնադարյան մեզ հայտնի կառույցներից ամենամեծն է ու ամենաարժեքավորը: Այն կիսականգուն է: Եկեղեցու հարավարևելյան պատին պահպանվել է V դարի մի արձանագրություն՝ հունարեն լեզվով: Շիրակի մարզի տարածքը հարուստ է նաև զարգացած միջնադարի պատմական հուշարձաններով (IX-XIV դարեր):

Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղում է գտնվում նույնանուն ամրոցը (X-XIII դար): Այն որպես բերդ և պարսպապատ քաղաք հիշատակում է Գրիգոր Մագիստրոսը [4]: Բերդը կառուցվել է նախաքրիստոնեական ամրոցի տեղում:

Շիրակի մարզի Գուսանագյուղ գյուղում պահպանվել է X-XII դարերի դղյակ-ամրոցի ավերակներ, որը գյուղացիներն անվանում են «Ղուլա»: Այդպիսի ամրոցներ սովորոբար կառուցում էին տեղի իշխանները, ինչն էլ վկայություն է գյուղի իշխանանիստ վայր լինելու մասին:

Միջնադարում կառուցված քաղաքացիական շենքերի լավագույն օրինակներ են հանդիսանում քարավանատները, որոնք կառուցվում էին ինչպես ճանապարհների վրա, այնպես էլ քաղաքներում ու մեծ վանքերին կից: Նման քարավանատան ավերակներ պահպանվել են Անիի մոտ՝ Ախուրյանի ձախ ափին՝ Ներքին Ջրափի գյուղում [5, էջ 735], որտեղ կառուցված է եղել նաև Անի տանող ամենամեծ կամուրջը՝ 31 մ թռիչք ունեցող կամարով («Չրփլուի կամուրջ»): «Ներքին Ջրափիի քարավանատունը կառուցվել է Վրաստանից և Հայաստանի հյուսիսային գավառներից դեպի Անի տանող գլխավոր ճանապարհի վրա և վերաբերում է քաղաքի ծաղկման շրջանին, ամենից ավելի հավանական է՝ X-XI դարերին» [6, էջ 38]: Շիրակի մարզի Ջրափի գյուղի քարավանատունը տեղափոխված է Ներքին Ջրափի գյուղից:

Նկարագրված և դասակարգված հուշարձանների զբոսաշրջային յուրացումն ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել որևէ համեմատական ցուցանիշ, որը ցույց կտար ըստ միավոր տարածքի դրանց քանակությունը: Մեր կողմից նպատակահարմար է համարվել օգտագործել հազեցվածության գործակիցը: Նկատի ունենալով Շիրակի մարզի տարածքի մեծությունը, ենթաշրջանների զբաղեցրած մակերեսը՝

սույն հոդվածում որոշակի փոփոխություններով կիրառվել է Ե. Ն. Կորչևսկայայի առաջարկած բանաձևը [8]: Ի տարբերություն Կորչևսկայայի՝ մենք միավոր տարածքի հազեցվածության հաշվարկը կատարել ենք հետևյալ բանաձևով.

$$H = \frac{K}{S},$$

որտեղ՝ H -հուշարձաններով հազեցվածությունն է, K -միավոր տարածքում հուշարձանների թիվը, S -միավոր տարածքի մակերեսը: Հաշվարկների համար մեր կողմից կազմվել է աղյուսակ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Շիրակի մարզի պատմամշակութային հուշարձանների գնահատման արդյունքները

№	Ենթաշրջան	Ենթաշրջանի մակերեսը (կմ ²)	Հուշարձան (հատ)	Միավոր (հատ)	Հուշարձանների խտությունը (հատ/կմ ²)	Միավորների խտությունը (հատ/կմ ²)
1	Ախուրյան	576	312	172	0,54	0,29
2	Ամասիա	608	69	101	0,11	0,16
3	Անի	429	191	311	0,44	0,72
4	Աշոցք	547	100	154	0,18	0,28
5	Արթիկ	484	193	341	0,39	0,70

Աղյուսակ 2.

Հազեցվածության գնահատման սանդղակ

Որակական գնահատականը	Հազեցվածության գործակիցը
Առավելագույն	0,7-1,0
Միջինից բարձր	0,5-0,7
Միջինից ցածր	0,3-0,5
Նվազագույն	Մինչև 0,3

Վերլուծելով գնահատման արդյունքները՝ ակնհայտ է դառնում, որ հուշարձանների թվաքանակի հազեցվածությամբ բարձր ցուցանիշն ունի Ախուրյանի ենթաշրջանը, իսկ ամենացածրը՝ Ամասիան: Այլ ցուցանիշ է ստացվում հուշարձանների միավորների գնահատման ժամանակ: Այս դեպքում առավելագույն ցուցանիշը ստանում է Անիի ենթաշրջանը, որը վկայում է տվյալ տարածաշրջանի պատմամշակութային հուշարձանների բազմազանության մասին:

Ամփոփելով գիտական հոդվածը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Շիրակի մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որը լավ նախադրյալ է զբոսաշրջության զարգացման համար:

2. Մարզի տարածքում հուշարձանները տեղաբաշխված են անհավասարաչափ. դրանց ամենամեծ խտությունը բաժին է հասնում հարավային ենթաշրջաններին, իսկ ամենավոքորը՝ հյուսիսային (Աշոցք) և հյուսիսարևմտյան (Ամասիա):
3. Մարզի տարածքում գտնվող հուշարձանների մեծ մասը անհայտ է զբոսաշրջային ընկերություններին և գրեթե չի օգտագործվում այդ նպատակով:
4. Անհրաժեշտ ներդրումների, ինչպես նաև տեղեկատվության հասանելիության բարձրացման միջոցով կարելի է Շիրակի մարզը դարձնել Հայաստանի մշակութային զբոսաշրջության կարևոր ուղղություններից մեկը:

Հետազոտությունն իրականացվել է ՇՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 02-SCI-2019 գիտական թեմայի շրջանակներում:

Հավելված 1

Շիրակի մարզի պատմամշակութային հուշարձանները			
No	Հուշարձանի անվանումը	No	Հուշարձանի անվանումը
1	Լմբատավանք	44	Նոր Կյանք_Մբ. Գևորգ
2	Հառիճ_Մբ. Հարություն	45	Սարակապ_Մբ. Կարապետ
3	Երերույքի տաճար	46	Զույգաղբյուր_եկեղեցի
4	Սառնաղբյուր_Թադևոս Առաքյալ եկեղեցի	47	Կառնուտի դամբարանադաշտ
5	Մարմաշենի վանական համալիր	48	Բենիամինի_մեզալիթ
6	Մարալիկի Մբ. Աստվածածին եկեղեցի	49	Տուֆաշենի դամբարանադաշտ
7	Հողմիկ_տաճարային համալիր	50	Զույգաղբյուր_մեզալիթ
8	Արթիկ_բազիլիկ	51	Արթիկ_դամբարանադաշտ
9	Լեռնակերտ_բազիլիկ	52	Դարիկ_քարակույտեր
10	Կառնուտ_բազիլիկ	53	Հոռոմ_գոհասեղան
11	Պեմզաշեն_բազիլիկ	54	Հայկաձոր_գոհասեղան
12	Արթիկ_Մբ. Ստեփանոս	55	Անիպեմզա_գոհասեղան
13	Արթիկ_Մբ. Գևորգ	56	Շիրակական_դամբարանադաշտ
14	Արթիկ_Մբ. Աստվածածին	57	Անուշավան_ամրոց
15	Բարձրշեն_Մբ. Աստվածածին	58	Այգաբաց_ամրոց
16	Մարալիկ_Մբ. Պողոս-Պետրոս	59	Ախուրիկ_ամրոց
17	Կամխուտ_Մբ. Աստվածածին	60	Լեռնակերտ_ամրոց
18	Հայրենյաց_Կարմիր վանք	61	Հոռոմ_ամրոց
19	Հայրենյաց_Հովհան Օձնեցի	62	Ամասիա_ամրոց
20	Հացիկ_եկեղեցի	63	Մարալիկ_ամրոց_1
21	Ղազանչի_եկեղեցի	64	Մարալիկ_ամրոց_2

22	Մայիսյան Տիրամոր եկեղեցի	65	Ազատան_ամրոց
23	Ջրառատ_Մբ. Մինաս	66	Բաշգյուղ_ամրոց
24	Ջրաձոր_եկեղեցի	67	Աղին_ամրոց
25	Սարակապ_եկեղեցի	68	Բանդիվան_ամրոց
26	Վահրամաբերդ_եկեղեցի	69	Ջորակերտ_ամրոց
27	Քեթի_եկեղեցի	70	Լանջիկ_ամրոց
28	Նահապետավան_Մբ. Գրիգոր	71	Լեռնուտ_ամրոց
29	Նոր կյանք_Մբ. Գրիգոր Լուսավորիչ	72	Կարմրավան_ամրոց
30	Երազգավորս_եկեղեցի	73	Սառնաղբյուր_ամրոց
31	Կարմրաքար_եկեղեցի	74	Գուսանագյուղ_ամրոց
32	Սարալանջ_եկեղեցի	75	Կառնուտ_ամրոց
33	Ախուրիկ_եկեղեցի	76	Ղազանչի_ամրոց
34	Բերդաշեն_եկեղեցի	77	Սարապատ_ամրոց
35	Եղնաջուր_եկեղեցի	78	Մուսայեյան_ամրոց
36	Պեմզաշեն_Մբ. Սիոն	79	Վահրամաբերդ_ամրոց
37	Հայկաձոր_Մբ. Գրիգոր Լուսավորիչ	80	Երազգավորս_ամրոց
38	Հառիճավանք	81	Պեմզաշեն_ամրոց
39	Պեմզաշեն_Մբ. Առաքելոց	82	Կապս_ամրոց
40	Մակարավանք	83	Սպանդարյան_սեպագիր
41	Անուշավան_Մբ. Նշան	84	Ջրափի_բնակատեղի
42	Կարմրավան_եկեղեցի	85	Մարալիկ_բնակատեղի
43	Մուսայեյան_եկեղեցի	86	Ալվար_բնակատեղի
87	Ախուրիկ_բնակատեղի	115	Բյուրակն_գյուղատեղի
88	Աղին_բնակատեղի	116	Կամո_գյուղատեղի
89	Այգաբաց_բնակատեղի	117	Կարմրավան_գյուղատեղի
90	Այգաբաց_բնակատեղի	118	Հովիտ_գյուղատեղի
91	Երերույք_գյուղատեղի	119	Ջորաշեն_գյուղատեղի
92	Արևիկ_գյուղատեղի	120	Սարագյուղ_գյուղատեղի
93	Բենիամին_բնակատեղի	121	Սարակապ_գյուղատեղի
94	Գեղանիստ_բնակատեղի	122	Սարակապ_գյուղատեղի_1
95	Իսահակյան_բնակատեղի	123	Ամասիա_գյուղատեղի
96	Երազգավորս_բնակատեղի	124	Արդենիս_գյուղատեղի
97	Լանջիկ_բնակատեղի	125	Բավրա_գյուղատեղի
98	Լեռնագյուղ_բնակատեղի	126	Աղին_սրբավայր
99	Լեռնակերտ_բնակատեղի	127	Լեռնակերտ_սրբավայր
100	Լուսաղբյուր_բնակատեղի	128	Հոռոմ_սրբավայր
101	Կառնուտ_բնակատեղի	129	Ջրառատ_սրբավայր
102	Կարմրաքար_բնակատեղի	130	Տուֆաշեն_Թուխ Մանուկ սրբավայր
103	Հառիճ_բնակատեղի	131	Մարալիկ_քարայր-կացարան
104	Հացիկ_բնակատեղի	132	Ամասիա_քարայր-կացարան
105	Ղազանչի_բնակատեղի	133	Անուշավան_քարայր-կացարան

106	Մարմաշեն_գյուղատեղի	134	Խարկով_քարայր-կացարան
107	Մեծ Մանթաշ_գյուղատեղի	135	Լեռնակերտ_քարայր-կացարան
108	Մեղրաշեն_գյուղատեղի	136	Սպանդարյան_քարայր-կացարան
109	Նոր կյանք_գյուղատեղի	137	Պեմզաշեն_քարայր-կացարան
110	Ջրառատ_գյուղատեղի	138	Հայկաձոր_քարայր-կացարան
111	Ջրառատ_գյուղատեղի_2	139	Ջրառատ_քարայր-կացարան
112	Ջրառատ_գյուղատեղի_3	140	Ջրափի_քարավանատուն
113	Խարկով_գյուղատեղի	141	Խարկով_կամուրջ
114	Բանդիվան_գյուղատեղի		

**КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ ШИРАКСКОЙ
ОБЛАСТИ КАК ВАЖНЫЙ ОБЪЕКТ ДЛЯ КУЛЬТУРНОГО ТУРИЗМА**
Абрамян В. М., Мартиросян Л. М., Саргсян Р. С., Саргсян Э. М.

Целью исследования было выявить наличие наиболее живописных для туризма культурно-исторических памятников на территории Ширакской области, а также представить возможности их туристического применения. Важной задачей была оценка насыщенности культурно-историческими памятниками разных районов Ширакской области, что даст возможность представить направления, имеющие наибольшие туристические возможности для этой области.

Ключевые слова: памятник, церковь, туризм, Ширакская область, картирование, оценка, шкала, подрайон.

**CULTURAL-HISTORIC MONUMENTS OF SHIRAK REGION AS AN
IMPORTANT OBJECT FOR CULTURAL TOURISM**
Abrahamyan V. M., Martirosyan L. M., Sargsyan R. S., Sargsyan H. M.

The purpose of the study was to identify the presence of the most picturesque cultural and historical monuments for tourism in the territory of the Shirak region, as well as to present the possibilities of their tourist application. An important task was to assess the saturation of cultural and historical monuments of different subdistricts of the Shirak region, which will provide an opportunity to present the destinations that have the greatest tourist opportunities for the region.

Keywords: monument, church, tourism, Shirak region, mapping, assessment, scale, subarea.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի հնագիտական ժառանգությունը: Խմբագիր Հ. Ե. Սիմոնյան: «Հուշարձան»: 2013: 95 էջ:
2. ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%80_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6_%D6%87_%D5%B4%D5%B7%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB_%D5%A1%D5%B6%D5%B7%D5%A1%D6%80%D5%AA_%D5%B0%D5%B8%D6%82%D5%B7%D5%A1%D6%80%D5%B1%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB_%D6%81%D5%A1%D5%B6%D5%AF?fbclid=IwAR3amQkLJ9MDFC2NjVmFYJB4Qg11YOfZXXTCLFzVDJZaTpDyufLgPzDFpTE
3. Ջուհարյան Թ. Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները: Երևան: «Հայպետուսմանկ հրատ»: 1961: 184 էջ:
4. Հարությունյան Ս. Երազգավորսի 1977թ.-ի պեղումները, «Պատմաբանասիրական հանդես»: 2012: Թիվ 1: էջ 192-195:
5. Հովհաննիսյան Մ. Հայաստանի բերդերը: Վենետիկ: 1970: 1014 էջ:
6. Հարությունյան Վ. Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները: Երևան: Հայպետհրատ: 1960: 146 էջ:
7. Карчевская Е. Н. Развитие туристско-рекреационной деятельности в экологически проблемном регионе (на примере Гомельской области). // Псковский регионологический журнал. 2009. № 7. С. 110-117.

Տեղեկություններ հեղինակների մասին

Աբրահամյան Վ. Մ.- պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ v.abrahamyan62@mail.ru

Մարտիրոսյան Լ. Մ. – աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ mlevon2003@mail.ru

Մարգարյան Ռ. Մ.- երկրաբանական գիտությունների թեկնածու
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ rudolf-sargsyan@mail.ru

Մարգարյան Հ. Մ.- մագիստրոս
Շիրակի պետական համալսարան
Էլ. փոստ՝ hermine.sargsyan.95@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 27.05.2020
Գրախոսվել է՝ 08.11.2020